նէին նաև շնչերակներն ու երակները, ինչպէս նաև փորոտիքը։

Ուրիշ սաոր նման շատ դիտողութիւն-ներ կան, զորոնք հոս զանց կ'ընենք յի-շելու և խօսքերնիս կը կնքենք։

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ



Գոնտոմա կենդանին

Ղոլքոտանեաց մէջ գեղեցիկներէն մէկն ալ է Գոնտոմա ըսուածը, որ Խա-ըեյուսոյ Գոլուիոը կը գտնուի, և որուն վրայօք երկար ատեն շատ քիչ ծանօ-թութիւն ունէին բնապատումք, բայց հետզհետէ եղած հաւաստի քննու-թիւններով բաւականապէս տեղեկա-ցան, որով մասամբ ստուգուեցան նաև Պլիփոնի ըսածները։

Գոնտոմայի ընդհանուր տեսքն առ-նելով՝ եղջերուին կը նմանի, հինգ ու վեց ոտք երկայնութեամբ, իսկ բար-ձրութիւնը կրնայ չորսէն ինչուան չորս-ուկէս ոտք ըլլալ։ Ուրիշ արագաշարժ կենդանեաց նման նուրբ ու թեթև է մարմնով. սրունքները բարակ են ու ջղոտ, և սեւորակ կՃղակ մը ունին. իսկ առջևի սրունքները քիչ մը աւելի եր-կայն են։ Գոլուիոը միջակ է, ականջնե-ը երկայն ու լայն, եղջիւրները նորա-ձև ու զարմանալի. իսկ աչքերը սև ու վառվռուն են, բայց միանգամայն մանանկ քաղցր հայեցուածք մը ունին, որ եղ-ջերուաց ցեղին մէջ նշանաւոր եղած է։

Իր ուժեղ ու արագաշարժ անդամնե-
րուն վայելուչ ու սիրուն տեսքին հետ՝
ոչինչ նուազ աչքի ախորժելի է նաև
մազերուն ու մորթին տեսքը։ Պար-
մնոյն մէկ մասը, ականջներն ու սրունք-
ները՝ գորշ շիկագոյն լերկ ու փայլուն
մորթով մը պատած են, որ վզին մօտե-
ը սևի կը զարնէ. գլխուն ծայրէն ին-
ջած մազերը ձիու բաշի նման բոլոր վի-
զը կը զարդարեն. ատոնք ինչուան ուսը
սև են, անկից վար կը կարձնան, և
կռնակին երկայնութեամբը ձերմակ
գիծ մը կը ձևացընեն. կողերուն վրան
ալ այս գծին երկու կողմէն մէյմէկ ու-
րիշ ձերմակ գծեր ալ ունի բթաչափի
մը լայնութեամբ. և բոլոր մարմնոյն
վրայ այլ և այլ տեղեր ինը այսպիսի գի-
ծեր կան։

Կոնտոմայի կերպարանքը ստորա-
գրելէն ետքը, գանք հիմա իր բնաւո-
րութեանը վրայ խօսելու, զոր ինչուան
այս վերջերս ստոյգ չէին կրցած իմա-
նալ բնապատումը։ Պաղցը ու վախ-
կոտ է բնութեամբ, և զուրիշները
նուաճելու ամենևին բռնութիւն չբա-
նեցըներ, որուն ըստ բաւականին ուժ
և արագութիւն ալ ունի. ոչ երբէք
ուրիշներուն վրայ կը յարձակի. և իր
միակ զէնքը փախչիլն է. իսկ թէ որ
խիստ նեղը մնայ՝ ան ատենը միայն
իր զօրաւոր եղջիւրները կը գործածէ.
բայց տարակոյս չկայ որ վազելուն արա-
գութիւնն և ունեցած ճարտարութիւ-
նը իր ամենէն մեծ ու փրկարար զէն-
քերն են և ատոնցմով է որ զինքը հա-
լածող ո և իցէ թշնամւոյն ձեռքէն կը
խալըսի։ Ճանապարհորդ մը աչքով
տեսած կը պատմէ՝ որ գոնտոմա մը տա-
սը ոտքէն աւելի բարձր վանդակապատ
դրան մը վրայէն ցատքեր է առանց բա-
ւական միջոց ունենալու յարձակելու
համար։ Լոտակեր է. բայց այծու և
եղջերուի պէս աւելի կ'ախորժի ծառի
տերևներ ու դալար ճիւղեր ուտել։
Կոնտոման 'ի բնէ շատ ընկերասէր չէ
ու ընդհակառակն կ'ուզէ առանձնա-
նալ, մինչդեռ նոյն ցեղին վերաբերեալ
ուրիշ պարկաւոր կենդանիներ՝ անթիւ
բազմութեամբ ճամբորդութիւններ կը-
նեն և բոլոր դաշտերը մերկացընելով
կ'ապականեն։ Սակայն զարմանալին
այն է՝ որ գոնտոման շատ դիւրաւ կ'ըն-
տանեցնայ և լաւ կը ճանչնայ իր բարե-
րարը։ Հոլանտացիք, երբոր Պարեյու-
սոյ Կուլիսը դեռ իրենց կալուածն էր,
կրցան ատոնցմէ խել մը ընտանեցընել,
և ողջ գոնտոմա մը ինչուան Ամդեր-
տամ ալ բերին։ Ալամանտ անունով
Հոլանտացի քնապատումը այս կենդա-
նոյս վրայ խօսելու ատեն կ'ըսէ. "Ամ-
մենահեզ էր բնութեամբ մեր գոնտո-
ման, որով մի և նոյն փակարանին մէջ
հանդարտութեամբ ու սիրով կը կե-
նար մէկալ կենդանեաց հետ մէկտեղ.
երբոր տեսնար որ մէկը վանդակապա-
տին կը մօտենայ, մէկէն կը վազէր ե-
կողին ձեռքէն հաց կամ ուրիշ ունեցա-
ծը առնելու համար։ Զինքը կերա-
կրելու համար կու տային բրինձ, վար-
սակ, թաց կամ չոր խոտ, ստեպղին,
և այլն"։ Զայնն ալ իշու ձայնին կը
նմանցընէ։

Կոնտոմայի միսը համեղ է և Ոգ-
դենդացիք շատ կը յարգեն։ Որ-
թէն կրնայ կօշիկի նեբբան շինուիլ
կարծր ըլլալուն պատճառաւ. վայրե-
նիք եղջիւրները ծուխ քաշելու կը գոր-
ծածեն. ասկէ դուրս թէ որ մէկը ու-
զենայ սրածայր գաւազաններ կամ նե-
տեր շինել անոնցմով, կրնայ ինչուան
վայրի կենդանիներ ալ սպաննել։ Պա-
նի մը բնապատումներու կարծիքին
նայելով, Յոյները հին ժամանակներէ
'ի վեր կը ճանչնային այս կենդանիս
«դրէբոխէրոս» անուամբ. սակայն այլք
կ'ըսեն թէ Պլինիոսի ըրած ստորագրու-
թիւնը ոչ թէ գոնտոմայի, հապա իր
ցեղէն ուրիշ տեսակ կենդանւոյ մը վրայ
հասկընալու է։